**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)**
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
**Հեռ.՝**+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

07.08.2023
351-33

Պետական եկամուտների կոմիտեի
նախագահ Ռուստամ Բաղասյանին

# Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բաղասյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2022 և 2023 թվականների ընթացքում Հայաստանում գրանցված ո՞ր ընկերություններն են անօդաչու թռչող սարքեր (կոդ 8806) ներմուծել Հայաստան:
2. Նույն ժամանակահատվածում ո՞ր ընկերություններն են իրականացրել անօդաչու թռչող սարքերի արտահանում:
3. Նրանցից ո՞ր ընկերություններն են անօդաչու թռչող սարքեր արտահանել Ռուսաստան և Բելառուս:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան